



Թուրքիայի Հայոց Պատրիարք
Ամեն. Տ. Գարեգին Բ. Գևորգյան

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐքի Կ. ՊՈՂՍՈՅ

Խսթամպուլի Հայոց ընտրական ժողովը, 5 Սեպտեմբերի Զորեքշաբթի օրը, Թուրքիոյ Հայոց Պատրիարք ընտրեց Ս. Արքոռոյ Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գազամնեամը, իբրև յաջորդը՝ 6 ամիսներ առաջ վախճանած Շնորհը Պորք. Գալուստեամի: Կարգ մը ստիպողական պարագաներ մկանի ու մեմանվ, Գերշ. Տ. Գարեգին Մրբագան ընտրութեամ բարի լուրը ստանալէմ երկու օր ետք մեկնեցաւ իր նոր պաշտօնատեղին:

Գարեգին Մրբագան ծնած է 1927 Մայիս 18ին՝ Պոլիս: 1940ի վերջերը գալով Երուսաղեմ, կ'աշակերտի Ժառանգաւորաց Վարժարապետ եւ 1945ին կը ձեռնադրուի Սարկանագ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարքէմ, եւ Ընծայարամի բաժինը կը լրացնէ 1948ին:

Արար-Հրեայ պատերազմին պատճառաւ, քահանայական իր ձեռնադրութիւնը կը յապաղի Մինչեւ 1950ի սկիզբը, երբ Յունուար 22ին, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կ'ըմդութի կուսակրօն քահանայութեամ սուրբ օծումը ձեռամբ Եղիպտոսի օրուան Առաջնորդ Մամբրէ Արքեպս. Սիրութեամի:

Կարճ ժամանակ մը Ս. Արքո մնալէ ետք, իրավերովը Թուրքիոյ նորընտիր Պատրիարք Գարեգին Արքեպս. Խաչատուրեամի (Տրավիզոնի) կը մեկնի իր ծննդավայրը, ուր Պատրիարքը իրեն կը յանձնէ Վերատեսչութիւնը նորարաց Ս. Խաչ Դպրեվանին:

1959ի վերջերը կը մեկնի Ամերիկա, ուր կը մնայ եօք տարիներ, իբրև Հովիւ Մայրաքաղաք Ռուշինկընի: Խսկ 1966ին Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին կողմէ կը նշանակուի Առաջնորդ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի ու Ս. Էջմիածնի մէջ եպիսկոպոսական օծում ստանալէ ետք կը մեկնի Սիրութի, ուր կը մնայ մէկ ու կէս տասնամեակ, որու ըմբացրին կը տանի վարչական-կազմակերպչական գովելի աշխատանք, ի բարգաւանումն տարուէ տարի ստուարացող Աւստրալահայ գաղութին:

Լուսարարապետ Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեամի վախճանումէն յետոյ, Երանաշնորհ Տ. Եղիշէ Պատրիարք կը իրաւիրէ զինք Ս. Արքո, ուր 31 Մարտ 1981ին Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ կ'ընտրուի Լուսարարապետ Ս. Արքոռոյ, պաշտօն՝ զոյր կը վարէ մօտ տասնամեակ մը, Յոյն շրջանին ստանձնելով Կալուածոց Տեսչի եւ ատեն մընալ Ժառանգաւորաց Վարժարապետ Վերատեսչի պաշտօները:

Ընտրեալ Պատրիարքը, տեղական իշխանութիւններէն վաւերացուելէ ետք, Հոկտեմբեր 14ին բարձրացած է Արքոը Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեամ:

« Սինն », ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Ս. Յակոբեանց Միաբանութեամ ամդամներուն, երկար եւ բազմարդիւն գործութեութիւն կը մաղթէ Պոլսոյ քոյր Արքոնին նորընտիր Գահակալին: